ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/02

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Մալիշկայի «Մ.Վ. Լոմոնոսովի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
Բողոք բերող՝ «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Պատվիրատուի ներկայացուցիչ՝ Ս. Քարամյանի
Բողոքաբեր՝ «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի տնօրեն Ս. Ավագյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ-ՎՁՄ-Մ2ՄԴ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցում, սննդամթերքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 14.01.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀՀ-ՎՁՄ-Մ2ՄԴ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին մերժել «Ռուզաննա Զաքարյան» Ա/Ձ-ի հայտը ամբողջությամբ:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 14.01.2020թ.-ին:

15.01.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 20.01.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 20.01.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 27.01.2020թ.-ին:

ՀՀ կառավարության 23.01.2020թ.-ի թիվ 42-Ն որոշման համաձայն 2020 թվականի հունվարի 27-ի աշխատանքային օրը տեղափոխվել է 2020 թվականի փետրվարի 1-ին:

Հիմք ընդունելով վերոնշյալ որոշումը, Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.01.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի կողմից գործը վերսկսվել է և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 04.02.2020թ.-ին:

2. «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ն 14.01.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Բողոքաբերը ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել պատվիրատուի կողմից հայտարարված թիվ <<ՀՀ-ՎՁՄ-Մ2ՄԴ-ԳՀԱՊՁԲ-20/1>> ծածկագրով գնանշման հարցումի ձևով սննդամթերքի մատակարարման գնման ընթացակարգին: 27 դեկտեմբերի 2019թ. հայտերի բացման և գնահատման նիստում գնահատող հանձնաժողովը հայտարարել է բոլոր մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները, այդ թվում նաև <<Լիդեր Կոմպլեքս>> ՍՊԸ–ի գնային առաջարկը (27 դեկտեմբերի 2019թ. թիվ 2 արձանագրությունը, պայմանագիր կնքելու որոշումը սույն

բողոքի ներկայացման օրվա դրությամբ սահմանված Կարգով դեռևս չի հրապարակվել): Այնուհետև 2020թ. հունվարի 8-ին տեղեկագրում հրապարկվել է 30 դեկտեմբերի 2019թ. թիվ 2/1 գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությունը, համաձայն որի գնահատող հանձնաժողովը 1-ին տեղ զբաղեցրած , գնման ընթացակարգի պայմանները բավարարող և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ է ճանաչել 4 , 5, 7, 8, 10, 12, 13, 14, 17 չափաբաժիններով Ռուզաննա Զաքարյան Ա/Ձ-ին: 1, 9, 11, 15, 16 չափաբաժիններով Ազատեկ ՀԷԿ-ին: 3, 6 չափաբաժիններով Լիդեր Կոմպլեքս ՍՊԸ-ին, իսկ Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ի հայտը մերժվել է առանց մերժման հիմնավորման: Պարզորոշ երևում է նաև, որ 30.12.2019թ. կազմված և հրապարակված 2/1 արձանագրությունում ընկերությունների կողմից ներկայացված գնային առաջարկները հրապարակված են ոչ լրիվ, իսկ որոշման կայացմանը քվեարկել է նաև հանձնաժողովի քարտուղարը:

Գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներով: Մասնավորապես, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Իսկ Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման իրավասությունը վերապահված է գնահատող հանձնաժողովին:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետում նշված է, որ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Օրենքի համաձայն որակավորվում են այն մասնակիցները, որոնց ներկայացրած հայտը ամբողջությամբ բավարարում է Օրենքի պահանջներին:

Գնահատող հանձնաժողովը հայտերի բացման և գնահատման թիվ 2 նիստում դրական է գնահատել նաև Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանի կողմից ներկայացված հայտը այն դեպքում, երբ Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանի գնային առաջարկը սխալ է եղել կազմված: Մասնավորապես՝ գնային առաջարկի ԱԱՀ-ի սյունակում նշված թիվը, որը պետք է կազմեր ինքնարժեք գումարած շահույթ ընդհանրական գումարի 20%-ը , պակաս է գրված բոլոր չափաբաժինների համար: Մեզ մոտ առկա է այդ գնառաջարկի պատճենը:

*Նույն հրավերի համաձայն՝ եթե մասնակիցը ԱԱՀ վճարող է, ապա գնային առաջարկում պետք է նշվի ԱԱՀ-ի գումարը: Իսկ ԱԱՀ-ն հաշվարկվում է ինքնարժեք+շահույթ * 20% -ով: Ռուզաննա Զաքարյան Ա/Ձ-ն թիվ 2 հավելվածով գնային առաջարկով՝ բոլոր չափաբաժիններով սխալ է հաշվարկել ՀՀ պետ. բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի գումարը: Նման պայմաններում ակընհայտ է, որ 6=3+4+5, այսինքն ընդհանուր գինը պետք է հավասար լինի ինքնարժեք+շահույթ+ԱԱՀ՝ չի համապատասխանում իրականությանը:*

Գնահատող հանձնաժողովը հնարավորություն է տվել Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանին 2019թ. դեկտեմբերի 30-ին շտկելու ԱԱՀ-ի հաշվարկը և ներկայացնելու նոր գնային առաջարկ, որով ընկերությունը մի շարք չափաբաժիններով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 527-Ն որոշման գնումների գործընթացի կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով ՀՀ պետ. բյուջե է պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկմանը: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չե մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում փառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ փասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ փասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ փառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում փառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում սպացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում փառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում փառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով.

Հետևաբար Ռուզաննա Զաքարյան Ա/Ձ –ի կողմից 27 դեկտեմբերի 2019թ. ներկայացված գնային առաջարկում անհամապատասխանությունները վերաբերելի չեն նշված կետերին, ուստի և վերջինիս հայտը գնային առաջարկը սխալ ներկայացված լինելու հիմքով ենթակա է մերժման, համաձայն կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակի:

Վերոգրյալով պայմանավորված գտնում եմ, որ գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի արձանագրությամբ խախտվել է Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջը:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է պարտավորեցնել «ՀՀ-ՎԶՄ-ՄՀՄԴ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին մերժել «Ռուզաննա Զաքարյան» Ա/Ձ-ի հայտն ամբողջությամբ:

3. <u>ՀՀ Վայոց ձորի մարզի Մալիշկայի «Մ.Վ. Լոմոնոսովի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 15.01.2020թ.-ին թիվ գրությամբ դիմել է ՀՀ Վայոց ձորի մարզի Մալիշկայի «Մ.Վ. Լոմոնոսովի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի կողմից

14.01.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 30.01.2020թ.-ին էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացրել է բողոքի քննության համար նշանակություն ունեցող բոլոր փաստաթղթերի պատճենները:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/02 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ Վայոց ձորի մարզի Մալիշկայի «Մ.Վ. Լոմոնոսովի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով 20.12.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ-ՎՁՄ-Մ2ՄԴ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ն և «Ռուզաննա Զաքարյան» Ա/Ձ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից):

Մասնակիցը ներկայացված գնային առաջարկով ներկայացրել է հետևյալ գները.

N	**Ապրանքի անվանումը**	**Ինքնարժեք /տառերով և թվերով/**	**Շահույթ /տառերով և թվերով/**	**ԱԱՀ /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
1	**2**	**3**	**4**	**5**	**6=3+4+5**
2	Բրինձ	քսանչորս հազար յոր հարյուր հիսուն/24750/	երեք հազար վեց հարյուր/3600/	չորս հազար ինը հարյուր հիսուն/4950/	երեսուներեք հազար երեք հարյուր/33300/
3	Մակարոնեղեն	երեսունչորս հազար ինը հարյուր իննսունհինգ/34995/	երեք հազար յոթ հարյուր հիսուն/3750/	յոթ հազար հինգ/7005/	քառասունհինգ հազար յոթ հարյուր
4	Հնդկազավար	հիսունչորս հազար վեց հարյուր յոթանասուներկու/54672/	երեք հազար երկու հարյուր/3200/	տաս հազար ինը հարյուր քսանութ/10928/	վաթսունութ հազար ութ հարյուր/68800/
5	Ոսպ	քառասուներկու հազար վեց հարյուր յոթանասուներկոլ/42672/	չորս հազար ութ հարյուր/4800/	ութ հազար հինգ հարյուր քսանութ/8528/	հիսունվեց հազար/56000/

6	Բուսական յուղ	քառասուներեք հագար երեք հարյուր հիսուներեք/43353/	մեկ հազար ութ հարյուր/1800/	ութ հազար վեց հարյուր վաթսունյոթ/8667/	հիսուներեք հագար ութ հարյուր
7	Հավի կրծքամիս	մեկ հարյուր իննսուն հազար մեկ հարյուր վաթսուներկու/190162/	յոթ հազար /7000/	երեսունութ հագար երեսունութ/38038/	երկու հարյուր երեսունհինգ հազար երկու
8	Ոլոռ	երեսուներեք հազար երեք հարյուր քսանութ/33328/	չորս հազար չորս հարյուր ութսուն/4480/	վեց հազար վեց հարյուր յոթանասուներկու /6672/	քառասունչորս հագար չորս հարյուր ութսուն/44480/
9	Հաճար	քսան հագար/20000/	չորս հագար/4000/	չորս հագար/4000/	քսանութ հագար/28000/
10	Կարագ	իննսունհինգ հագար ութ հարյուր երեսունհիևգ/95835/	երկու հագար հինգ հարյուր/2500/	տասնինը հագար մեկ հարյուր վաթսունհինգ /19165/	մեկ հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր/117500/
11	Շաքարավազ	քսանութ հազար մեկ հարյուր քսանհինգ/28125/	երեք հազար/3000/	հինգ հազար վեց հարյուր քսանհինգ/5625/	երեսունվեց հագար յոթ հարյուր
12	Լոբի հատիկավոր	երեսուն հազար/30000/	երկու հազար/2000/	վեց հագար/6000/	երեսունութ հազար/38000/
13	Պանիր	յոթանասունհինգ հազար/75000/	հրեք հազար/3000/	տասնհինգ հազար/15000/	իննսուներեք հազար/93000/
14	Թխվածքաբլիթ	վաթսունչորս հազար մեկ հարյուր վաթսուներկու/64162/	հինգ հազար վեց հարյուր/5600/	տասներկու հազար ութ հարյուր երեսունութ/12838/	ութսուներկու հագար վեց հարյուր/82600/
15	Տոմատի մածուկ	տասնինը հագար հրեք հարյուր յոթանասունհինգ/19375/	մեկ հագար երկու հարյուր հիսուն/1250/	երեր հագար ութ հարյուր յոթանասունհիեգ	քսանչորս հագար հինգ հարյուր/24500/
16	Աղ	երեր հագար ինը հարյուր իննսունինը/3999/	շորս հարյուր հիսուն/450/	ութ հարյուր մեկ/801/	հիեզ հազար երկու հարյուր հիսուն/5250/

17	Կարտոֆիլ	երեսունմեկ հազար վեց հարյուր քսանհինգ/31625/	չորս հազար վեց հարյուր/4600/	վեց հազար երեք հարյուր քսանհինգ/6325/	քառասուներկու հազար հինգ հարյուր

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 27.12.2019թ.-ին «Ռուզաննա Զաքարյան» Ա/Ձ-ին ուղարկվել է ծանուցում, որում նշվել է, որ Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում առկա են ԱԱՀ-ի հաշվարկի անճշտություններ, որի արդյունքում Ընթացակարգի նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով արձանագրված անճշտությունները շտկելու և ներկայացնելու համար:

Մասնակցի կողմից 30.12.2019թ.-ին ներկայացվել է շտկված գնային առաջարկ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.12.2019թ.-ի թիվ 2/1 արձանագրության համաձայն՝ «Ռուզաննա Զաքարյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանել են հրավերով սահմանված պահանջներին:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 2-րդ, 5-րդ, 7-8-րդ, 10-րդ, 12-14-րդ և 17-րդ չափաբաժինների մասով «Ռուզաննա Զաքարյան» Ա/Ձ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի կողմից 14.01.2019թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ Վայոց ձորի մարզի Մալիշկայի «Մ.Վ. Լոմոնոսովի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով 20.12.2019թ.-ին

հայտարարված «ՀՀ-ՎՁՄ-Մ2ՄԴ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Ռուզաննա Զաքարյան» Ա/Ձ-ն թիվ 2 հավելվածով՝ ներկայացված գնային առաջարկով ներկայացրել է հետևյալ գները.

N	**Ապրանքի անվանումը**	**Ինքնարժեք /տառերով և թվերով/**	**Շահույթ /տառերով և թվերով/**	**ԱԱՀ /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
1	**2**	**3**	**4**	**5**	**6=3+4+5**
2	Բրինձ	քսանչորս հազար յոր հարյուր հիսուն/24750/	երեք հազար վեց հարյուր/3600/	չորս հազար ինը հարյուր հիսուն/4950/	երեսուներեք հազար երեք հարյուր/33300/
3	Մակարոնեղեն	երեսունչորս հազար ինը հարյուր իննսունհինգ/34995/	երեք հազար յոթ հարյուր հիսուն/3750/	յոթ հազար հինգ/7005/	քառասունհինգ հազար յոթ հարյուր
4	Հնդկազավար	հիսունչորս հազար վեց հարյուր յոթանասուներկու/54672/	երեք հազար երկու հարյուր/3200/	տաս հազար ինը հարյուր քսանութ/10928/	վաթսունութ հազար ութ հարյուր/68800/
5	Ոսպ	քառասուներկու հազար վեց հարյուր յոթանասուներկոլ/42672/	չորս հազար ութ հարյուր/4800/	ութ հազար հինգ հարյուր քսանութ/8528/	հիսունվեց հազար/56000/
6	Բուսական յուղ	քառասուներեք հազար երեք հարյուր հիսուներեք/43353/	մեկ հազար ութ հարյուր/1800/	ութ հազար վեց հարյուր վաթսունյոթ/8667/	հիսուներեք հազար ութ հարյուր
7	Հավի կրծքամիս	մեկ հարյուր իննսուն հազար մեկ հարյուր վաթսուներկու/190162/	յոթ հազար /7000/	երեսունութ հազար երեսունութ/38038/	երկու հարյուր երեսունհինգ հազար երկու
8	Ոլոռ	երեսուներեք հազար երեք հարյուր քսանութ/33328/	չորս հազար չորս հարյուր ութսուն/4480/	վեց հազար վեց հարյուր յոթանասուներկու /6672/	քառասունչորս հազար չորս հարյուր ութսուն/44480/
9	Հաճար	քսան հազար/20000/	չորս հազար/4000/	չորս հազար/4000/	քսանութ հազար/28000/

10	Կարագ	իննսունհինգ հազար ութ հարյուր երեսունհիևգ/95835/	երկու հազար հինգ հարյուր/2500/	տասնինը հազար մեկ հարյուր վաթսունհինգ /19165/	մեկ հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր/117500/
11	Շաքարավազ	քսանութ հազար մեկ հարյուր քսանհինգ/28125/	երեք հազար/3000/	հինգ հազար վեց հարյուր քսանհինգ/5625/	երեսունվեց հազար յոթ հարյուր
12	Լոբի հատիկավոր	երեսուն հազար/30000/	երկու հազար/2000/	վեց հազար/6000/	երեսունութ հազար/38000/
13	Պանիր	յոթանասունհինգ հազար/75000/	հրեք հազար/3000/	տասնհինգ հազար/15000/	իննսուներեք հազար/93000/
14	Թխվածքաբլիթ	վաթսունչորս հազար մեկ հարյուր վաթսուներկու/64162/	հինգ հազար վեց հարյուր/5600/	տասներկու հազար ութ հարյուր երեսունութ/12838/	ութսուներկու հազար վեց հարյուր/82600/
15	Տոմատի մածուկ	տասնինը հազար հրեք հարյուր յոթանասունհինգ/19375/	մեկ հազար երկու հարյուր հիսուն/1250/	երեր հազար ութ հարյուր յոթանասունհիեգ	քսանչորս հազար հինգ հարյուր/24500/
16	Աղ	երեր հազար ինը հարյուր իննսունինը/3999/	շորս հարյուր հիսուն/450/	ութ հարյուր մեկ/801/	հիեզ հազար երկու հարյուր հիսուն/5250/
17	Կարտոֆիլ	երեսունմեկ հազար վեց հարյուր քսանհինգ/31625/	չորս հազար վեց հարյուր/4600/	վեց հազար երեք հարյուր քսանհինգ/6325/	քառասուներկու հազար հինգ հարյուր

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 27.12.2019թ.-ին «Ռուզաննա Զաքարյան» Ա/Ձ-ին ուղարկվել է ծանուցում, որում նշվել է, որ Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում առկա են ԱԱՀ-ի հաշվարկի անճշտություններ, որի արդյունքում Ընթացակարգի նիստը կասեցվում է մեկ աշխատանքային օրով արձանագրված անճշտությունները շտկելու և ներկայացնելու համար:

Մասնակցի կողմից 30.12.2019թ.-ին ներկայացվել է շտկված գնային առաջարկ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.12.2019թ.-ի թիվ 2/1 արձանագրության համաձայն՝ «Ռուզաննա Զաքարյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանել են հրավերով սահմանված պահանջներին, ինչով

պայմանավորված 2-րդ, 5-րդ, 7-8-րդ, 10-րդ, 12-14-րդ և 17-րդ չափաբաժինների մասով «Ռուզաննա Զաքարյան» Ա/Ձ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 41-րդ կետով, որոշել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում հնարավորության տալ Մասնակցին շտկել արձանագրված անհամապատասխանությունը, ինչը կատարվել է վերջինիս կողմից:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

ՀՀ հարկային օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ն հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Ռուզաննա Զաքարյան» Ա/Ձ-ի կողմից բոլոր չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկի հաշվարկը չի համապատասխանում վերոնշյալ իրավական նորմերի պահանջներին, քանի որ սխալ է հաշվարկվել մասնակցի կողմից տվյալ գործարքի գծով ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը՝ հետևաբար սխալ է ներկայացվել պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից բոլոր չափաբաժինների համար առաջարկվող ընդհանուր գինը: Օրինակ 3-րդ չափաբաժնի մասով մասնակցի կողմից վճարկվելիք ԱԱՀ-ի գումարը պետք է կազմեր 7626 ՀՀ դրամ՝ գնային առաջարկում նշված 7620 ՀՀ դրամի փոխարեն /34 380+3750*20%/, 17-րդ չափաբաժնի մասով՝ 7093,2՝

նշված 7084 ՀՀ դրամի փոխարեն /30 866+4600*20%)՝ որպիսի պայմաններում փոխվում է նաև Մասնակցի ներկայացրած ընդհանուր գինը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ գնային առաջարկում անհամապատասխանություն արձանագրվելու դեպքում կիրառելի չէ Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկելու հնարավորությունը, ուստի տվյալ դեպքում ԱԱՀ-ի սխալ հաշվարկելու հանգամանքը պետք է գնահատվել որպես գնային առաջարկին վերագրվող անհամապատասխանություն՝ որպիսի պայմաններում գնահատող հանձնաժողովի կողմից Մասնակցի հայտը բավարար գնահատելու և ապա առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումն իրավաչափ չէ և չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի կողմից 14.01.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/02 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «ՀՀ-ՎՁՄ-Մ2ՄԴ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել «Ռուզաննա Զաքարյան» ԱՁ-ի հայտը մերժելու մասին որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**